ԵԹԷ ԱԿԱՆԱՋԵՐԾՈՂՆԵՐՆ ՈՒՇԱՆԱՅԻՆ...

«Պրաւդա»ի Բաքուի թղթակից Զ. Կադիմբէկովը հաղորդում է, որ դեռ վաղ է խօսել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ճանապարհների անվտանգութեան մասին: Ստեփանակերտից ոչ հեռու Աղդամ-Շուշի ճանապարհի մի հատուածում ականներից վնասուել են մարդատար երկու հանրակառքեր:

«Սարսափելին ոչ թէ մեքենաներին հասցուած վնասներն են», գրում է թղթակիցը, «այլ մարդկանց ստացած վէրքերը: Ադրբեջանցի երկու ուղեւորներ ծանր վիճակում տեղափոխուել են Աղդամի շրջանային հիւանդանոց»:

Կադիմբէկովը յիշատակում է նաեւ, որ եթէ վերջերս Շուշիի շրջանի Կալադերեսի գիւղի մօտ զինուորականների կողմից ժամանակին չվնասազերծուէր 150 մետր երկարութեամբ ականապատուած տեղամասը, ապա աղէտը անխուսափելի կը լինէր: